ՄԱՐԻՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՁԼՄ-Ի ԴԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հակամարտությունների ուսումնասիրություններով զբաղվող տարբեր միջազգային կազմակերպություններ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արձանագրել են աշխարհում հակամարտությունների աճի ռեկորդային ցուցանիշ: Միջազգային հակամարտությունների հետազոտությունների Հեյդելբերգի ինստիտուտի կողմից իրականացված ուսումնասիրությունների համաձայն՝ միայն 2008 թվականին աշխարհում ծավալվել է 345 հակամարտություն: Նախորդ տարեվերջին ինստիտուտի կողմից հրապարակված «Հակամարտությունների սանդղակ» տարեկան զեկույցի տվյալներով՝ հակամարտություններից 9-ը, այդ թվում վրաց-օսականը, բնորոշվել են որպես պատերազմական կամ խոշոր զինված հակամարտություններ: Միայն Կորեայի, Վիետնամի պատերազմներին, ինչպես նաև Իրանի և Իրաքի միջև հակամարտությանը զոհ է գնացել ավելի քան 1 մլն մարդ[1]:

Միջազգային կազմակերպությունների հետազոտությունները փաստում են, որ վերջին տարիներին երկրագնդի տարբեր հատվածներում առկա կոնֆլիկտային իրավիճակները չեն հանդարտվում, ընդհակառակը աշխարհն ավելի վտանգավոր և ագրեսիվ է դառնում: Կոնֆլիկտների քանակը տարեց տարի միայն աճում է: 1997թ-ից սկսած՝ նկատվում է հակամարտությունների կայուն աճման միտում: Մասնավորապես, ըստ «Հակամարտությունների սանդղակի», եթե 1997 թվականին համաշխարհային հակամարտությունների քանակը հաշվվել է 124, ապա արդեն 2002-ին՝ 173, 2004-ին՝ 230, 2006-ին՝ 278, և, ի վերջո, 2008թ.-ին դրանց քանակն արդեն իսկ հասել է 345-ի: Ընդ որում, հաճախակի են դարձել հակամարտությունների՝ բռնություններով ուղեկցվող, այլ կերպ ասած՝ պատերազմական կամ ահաբեկչական դրսևորումները: Հակամարտության դրսևորման հատկապես վերջին մեթոդը կտրուկ աճել է վերջին տասնամյակում[2]:

Ցավալիորեն, հակամարտություններն աստիճանաբար ոչ միայն ավելի մեծ աշխարահագրություն են ընդգրկում, այլև հետզհետե նվազում են դրանց խաղաղ ճանապարհով լուծման տարբերակները: Հակամարտությունների լուծման կամ խաղաղ կարգավորման հարցում այսօր կարևորվում է ոչ միայն հակամարտող կողմերի դերը: Զանգվածային լրատվամիջոցների դերը պակաս էական չէ այս խնդրում, քանի որ հենց լրագրողի միջոցով է լսարանն

ընթերցում հակամարտությունների խորքային պատճառներն ու հանգամանքները: Կախված այն հանգամանքից, թե որքանով են լրագրողներն օբյեկտիվ և նրբանկատ իրենց լուսաբանումներում, նրանք կարող են կամ ավելի սրել իրավիճակը՝ նոր կոնֆլիկտների տեղիք տալով, կամ էլ ընդհակառակը, զգալի ներդրում ունենալ դրանց՝ խաղաղ ճանապարհով կարգավորման գործում:

Հակամարտությունները՝ այդ թվում ռազմական գործողությունները, լրագրողների համար «սովորական միջավայր» են՝ նրանց բնորոշ է մշտապես իրադարձությունների «կիզակետում» լինելու ձգտումը: Եթե ինչ-որ տեղ իշխանությունները փորձում են հարթել ժողովրդի կողմից բարձրացված բողոքի ցույցերը, ապա լրագրողներն անպատճառ իրադարձությունների կենտրոնում են, եթե ինչ-որ տեղ ռազմական գործողություններ են ծավալվում, ապա լրագրողները զինվորների հետ միասին «սառչում» են խրամատներում: Իսկ դա ամենևին էլ հեշտ չէ...

Սակայն հեռուստադիտողը, ռադիոլսողը կամ ընթերցողը, հիանալով հանդերձ լրագրողների համարձակությամբ և վճռականությամբ, պատրաստ է նրանց մեղադրել հակամարտությունների հրահրման և կամ խնդրի սրացման համար: Դրա համար լրագրողներին քննադատում են նաև քաղաքական գործիչները: Իսկ լրագրողները որպես արդարացում՝ նման քննադատությունների ալիքին սովորաբար հակադարձում են հետևյալ պատճառաբանությամբ. «Մենք ընդամենը հայելի ենք, որն արտացոլում է կատարվածը»: Այդուհանդերձ, իրադարձությունների խիստ կտրուկ լուսաբանումը կամ դրանք ոչ կոմպետենտ ձևով ներկայացնելը կարող է հարուցել կողմերից մեկի զայրույթը, ինչն էլ իր հերթին կարող է նոր հակամարտության ծագման պատճառ դառնալ: Հավատ ընծայելով հակամարտության վերաբերյալ կողմերից մեկի դիրքորոշմանը՝ լրագրողը կարող է հրապարակել հոդված կամ նախապատրաստել հաղորդում, որում հնարավոր է որ իր զրուցակցի կարծիքը ներկայացնի որպես ճշմարտություն: Այդպիսով նա սկսում է գործել կողմերից մեկի օգտին: Դա կարող է հանգեցնել իրավիճակի վատթարացմանը: Ուրեմն ի՞նչ, չլուսաբանե՞լ հակամարտությունը: Միգուցե եթե լրագրողները լռեն, եթե չպատմեն տվյալ իրադարձության մասին, եթե չներկայացնեն առկա խնդիրը, ապա կրքերը հանդարտվեն և իրավիճակը խաղաղվի՞: Սակայն դա այդպես չէ: Խոշոր հակամարտությունների ինչպես ծագման, այնպես էլ դրանց հնարավոր հետևանքների պատասխանատվությունն իրականում քաղաքական խմբավորումներինը, հասարակական ինստիտուտներինն ու կառավարություններինն է: Նրանք էլ պետք է կոնկրետ մեթոդներ մշակեն, որոնք կօգնեն եթե ոչ կանխել, ապա գոնե հարթել հակամարտությունները: Նրանք պետք է մշակեն ցանկացած դեպքում հակամարտությունների կառավարման քաղաքական տեխնոլոգիաներ: Իսկ այդ տեխնոլոգիաների շարքում առանձնացվում է մի դեր, որը վերապահված է ոչ այլ ինստիտուտի, քան լրատվամիջոցներին, որոնք էլ իրականացնում են

հակամարտության զանգվածային լուսաբանումը: Լուսաբանման այդ գործընթացում ներառված են ոչ միայն մասնակից կողմերի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը, այլև հակամարտության ծագման պատճառների և դրանց հնարավոր հետևանքների վերաբերյալ մանրամասները: Ուստի, ճշմարտացի և օբյեկտիվ տեղեկատվության տարածումը նախապայմաններ է ստեղծում հակամարտության հանգուցալուծման և հակամարտության խաղաղ կարգավորման համար:

Մի բան հստակ է. այսպես թե այնպես, ճշմարտացի լինի հրապարակումը թե սուբյեկտիվ, լրատվամիջոցի ազդեցությունը լսարանի կողմից կոնֆլիկտի ընկալման հարցում, ինչպես նաև դրա զարգացման հետագա ընթացքի վրա, անխուսափելի է, ուստի լրագրողը, որն այսպես ասած «ինֆորմացիայի տերն» է, և նյութը կարող է մատուցել իր հայեցողությամբ, պետք է հնարավորինս խուսափի իր հրապարակմամբ հակամարտության ծավալմանը նպաստելուց: Անգամ զուտ փաստը ներկայացնելուց հարկավոր է խիստ շրջահայաց լինել, եթե խոսքը վերաբերում է հակամարտության լուսաբանմանը: Լրագրողը կարող է պարզապես նկարագրել իրական և մակերեսային փաստերը, սակայն միաժամանակ կարող է փորձել լույս սփռել դրանց ծագման հիմնապատճառների վրա՝ փաստերի հետևում ցանկանալով տեսնել ավելին, ցույց տալ իրադարձությունների փոխկապակցվածությունն ու հակասությունը: Լրագրողական գործունեության հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ լրագրողի կոնկրետ մասնագիտական պարտավորության կատարման հիմնական դրդապատճառը «ազդելու» ցանկությունն է. ազդել մարդու, իրադարձության ընթացքի, սոցիալական նշանակություն ունեցող հանգամանքների և գործընթացների վրա: Միաժամանակ այս հարցում կարևոր է գիտակցել, որ անգամ եթե լրագրողի առաջնային նպատակը ազդելը չէ, ապա այսպես թե այնպես հակամարտության մասին տեղեկացնելը ազդեցություն է թողնում հակամարտության ընկալման վրա և, ըստ այդմ, հակամարտության լուծման կամ սրացման վրա [3]:

ՁԼՄ-ն մշտապես եղել է հատկապես գինված հակամարտությունների ակտիվ մասնակիցը: Այս համատեքստում շատ խորհրդանշական է Գլեյվիցի ռադիոկայանի գրավումը Երկրորդ համաշխարհայինի տարիներին: Հենց այդ փաստն էլ տասնամյակներ առաջ դարձավ պատերազմական գործողությունների ծավալման առիթ: Եվս մի հատկանշական հանգամանք. պատմաբանները նշում են, որ Մուսսոլինին ռազմական գործողությունները պլանավորելիս, ավելի շատ տեղ էր տալիս թերթերում հայտնվող վերնագրերին, քան ռազմական ողջամտությանը: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ վիետնամական պատերազմի տարիներին ամերիկյան ռազմական ուժերը բազմիցս վստահեցնում էին, որ ամերիկյան կողմի պարտությունը ոչ այնքան ՍՍՀՄ-ի կողմից Վիետնամին ցուցաբերված օժանդակության ու վիետնամցիների տոկունության

արդյունքն էր, որքան պատերազմական գործողությունների նկատմամբ «իրենց» լրատվամիջոցների որդեգրած բացասական վերաբերմունքի: Մասնավորապես, պատերազմական գործողությունների լուսաբանման ժամանակ բացակայում էր «պատերազմական գրաքննությունը», որը սովորաբար առաջինն է ի հայտ գալիս նման դեպքերում: Հատկապես պատերազմական ժամանակահատվածի՝ Զոն Քենեդու նախագահության տարիներին ամերիկյան մամուլը հիմնականում է ազատ է եղել իր հրապարակումներում: Պատերազմի ամբողջ ընթացքում ամերիկյան լրատվամիջոցները լուսաբանել են Վիետնամում տեղի ունեցող ռազմական գործողությունները: 60-ականների և 70-ականների առաջին կեսին լրատվամիջոցների որդեգրած քաղաքականության և դիրքորոշման հետ փոխվում էր նաև հասարակության դիրքորոշումը պատերազմի նկատմամբ:

1967-ին՝ Միացյալ Նահանգներում, երեկոյան լուրերի 90 տոկոսը պատերազմի մասին ռեպորտաժներն էին, և մոտավորապես 50 միլիոնանոց լսարան էր հետևում երեկոյան այդ եթերաժամերին: Մինչ այդ ԱՄՆ-ի պաշտպանական ուժերը շարունակ հայտարարում էին, թե երկրի զորքը առաջխաղացում է արձանագրում հակամարտությունում, սակայն երբ սկսվեց պատերազմի աջակցության նվազումը հատկապես լրատվամիջոցների և ըստ այդմ՝ հասարակության կողմից, ինչը տարբեր տեսաբաններ մեկնաբանում են պատերազմական գրաքննության բացակայությամբ, սկսվեցին նաև անհաջողությունները ռազմի դաշտում [4]:

Կարելի է տարբեր հակամարտությունների օրինակներ հիշատակել, երբ դրանց ելքը մեծապես պայմանավորված է եղել պատերազմական գործողությունների՝ ԶԼՄ-ի լուսաբանման գործոնով: 90-ականներին Բալկաններում ծավալված հակամարտությունների հետևանքները ևս հիմնականում պայմանավորում են լրատվամիջոցների դերակատարմամբ՝ մեղքի մեծ բաժին վերագրելով վերջիններիս, հատկապես մեղադրելով ապատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ. «Ճշմարտությունը պատերազմի առաջին զոհն է:...Հարավսլավիայում պատերազմը հնարավոր չէր լինի առանց փայլուն կանխամտածված և ԶԼՄ-ի միջոցով լայնորեն տարածված ստի և կեղծիքի:..... Որքան շատ էր տևում պատերազմը, այնքան լսարանի համար սովորական էին դառնում պատերազմի սարսափեցնող տեսարանները, այնքան ավելի հեռու էին գնում լրագրողների ձգտումները՝ էլ ավելի թեժացնել իրավիճակը, ուռճացնել չճշտված փաստերը: Գագաթնակետը Բոսնիայում պատերազմի արտացոլումն էր: Այն, որ այստեղ էլ պատերազմական բոլոր հանցագործությունները վերագրվում էին սերբերին, անկասկած է: 1994 թվականին անգլիացի լրագրող Դ. Օուենը «Europa time» լոնդոնյան ամսագրում մեջբերել է ամսագրի խմբագրի արձագանքը Բոսնիայի վերաբերյալ իր պատրաստած հրապարակման վերաբերյալ. «Շատ լավ է, սակայն արդյո՞ք այն չէր կարող լինել ավելի

հակասերբական,-Ինչու՞,- Որովհետև թերթերի մեծ մասն այս շաբաթ սերբերի դեմ է տրամադրված...» [5]:

Իրավացիորեն ոլորտի շատ մասնագետներ համոզված են, որ լրագրողները վաղուց արդեն դարձել են աշխարհում ընթացող գրեթե յուրաքանչյուր հակամարտության երրորդ կողմը և, կախված այն հանգամանքից, թե ՁԼՄ-ն ավելի շատ դեպի որ կողմն է հակված, դրանից զգալիորեն կախված է հակամարտության լուծման վերջնական արդյունքը:

Հակամարտությունների ընթացքի վրա ՁԼՄ-ի ազդեցությունն ուսումնասիրող գիտնականները նկատում են, որ հասարակության զգալի հատվածի մոտ հատկապես հեռուստահաղորդակցության արդյունքում են ձևավորվում քաղաքական, գաղափարական և աշխարհաքաղաքական հայացքները: Հեռարձակվող ռեպորտաժը աշխարհի ինչ-որ մի թեժ կետից, որի մասին ոչինչ հայտնի չէ որևէ այլ երկրի շարքային քաղաքացուն, պետք է նվազագույն ժամկետում նրան ներկայացնի այդ տարածաշրջանի աշխարհագրական, պատմական, կրոնական, տնտեսական, մշակութային և էթնիկ դիմագիծը՝ միաժամանակ համապատասխան շեշտադրումներ կատարելով նախանշված քաղաքական նպատակի օգտին: Այնպես որ, զանգվածային լրատվամիջոցները ժամանակակից աշխարհում արդեն ոչ թե զուտ աջակցողի գործառույթ են իրականացնում, այլ վերածվել են յուրատեսակ հզոր ինքնուրույն գործոնի, որն ի վիճակի է ազդել ազգությունների պատմական ճակատագրի վրա:

Գիտականորեն հիմնավորվում է, որ հակամարտությունը, հատկապես ազգամիջյան հակամարտություններին է խոսքը վերաբերում, զարգացման ցածրագույն աստիճանից դեպի կուլմինացիա կարող է վերաճել հետևյալ փուլերի միջով՝ լարվածություն-անհամաձայություն-մրցակցություն-վեճ-թշնամանք-բռնություն-ագրեսիա-պատերազմ: Այստեղ գործում է մի հստակ կանոն՝ անթույլատրելի է հակամարտության զարգացման նշված փուլերից մեկին սխալ գնահատական տալը, կամ սխալ ներկայացնելը, ինչպես նաև մի փուլից մյուսը հակամարտության վերածման հետևողականությունն անտեսելը: Ընդ որում, հակամարտությունների ուսումնասիրման փորձը ցույց է տալիս, որ հազվադեպ է լինում, երբ ասենք անհամաձայնությունից դրանք միանգամից վերածեն զինված ընդհարումների, քանի որ մինչ այդ հակամարտությունը դեռ պետք է անցնի մրցակցության, հետո՝ վեճի, հետո՝ թշնամանքի փուլերը և այլն: Սակայն եթե մամուլը կողմերի միջև առկա լարվածությունը ներկայացնի որպես թշնամանք, ապա կարելի է չկասկածել, որ դրանից հետո կողմերն իրոք միմյանց նկատմամբ թշնամաբար կտրամադրվեն և արդեն կսկսեն մտածել ուժային մեթոդների կիրառման մասին [3]:

Նշված օրենքների խախտումն իրոք կարող է հանգեցնել իրավիճակի կտրուկ վատթարացման: Հաճախ որպես միջազգային հակամարտության տիպիկ օրինակ ներկայացվում է 1962 թվականի Կարիբյան ճգնաժամը, որի

ընթացքում ամերիկյան և սովետական կողմերը սկզբնապես իրենց գործողությունները պլանավորում էին ելնելով այն ենթադրությունից, որ հակառակորդ կողմը խիստ ագրեսիվ նպատակներ ունի, քանի որ հրապարկվում էին հետևյալ վերտառությամբ հոդվածներ՝ «Կողմերից մեկի անվտանգությունը մյուսի ռազմական պոտենցիալի ոչնչացման հաշվին», «Հակառակորդ կողմի հաղթանակը մյուսի պարտության հաշվին»: Այսինքն՝ երկու կողմի մամուլն էլ արեց հնարավոր ամեն ինչ՝ որպեսզի գաղափարական հակառակորդներին ներկայացնի որպես միանգամայն հավանական հակառակորդներ ռազմական առճակատման ասպարեզում: Դրա հետ մեկտեղ մամուլն անտեսում էր երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները որպես գործընկերներ այս կամ այն ոլորտում: Այսպիսով, երկկողմ հարաբերությունների արհեստականորեն վատթարացման հետևանքով կողմերը մրցակցության փուլից արագորեն անցում կատարեցին թշնամանքի մակարդակ, որի հետևում արդեն ակնհայտորեն թաքնված էին ագրեսիան ու ռազմական գործողությունները:

Շատ մասնագետների դիտարկմամբ՝ այսօր ՁԼՄ-ի շնորհիվ կողմերին հեշտությամբ կարելի է հասարակ կոնֆլիկտից զինված առճակատման հրահրել խնդրի սխալ մեկնաբանությունների, կամ, օրինակ, մրցակիցներին որպես թշնամիներ ներկայացնելու, կողմերից մեկին ակնհայտ բացասական, մյուսին՝ դրական գույներով ներկայացնելու, մի խոսքով՝ ոչ օբյեկտիվ լուսաբանման, կամ հոգեբանական-տեղեկատվական պատերազմի մեխանիզմների կիրառման միջոցով: Պատահական չէ, որ հակամարտող կողմերն այսօր հավասարապես կարևորում են հաղթանակը ինչպես իրական, այնպես էլ տեղեկատվական պատերազմում, քանի որ պատմությունն ապացուցում է, որ ռազմական գործողությունների հաջող ավարտը մեծապես կարող է պայմանավորված լինել նախապես լավ մշակված տեղեկատվական քաղաքականությամբ և այդ ոլորտում տարած հաղթանակներով: Միակ տուժողն այդ դեպքում անմեղ քաղաքացիներն են և օբյեկտիվությունը:

Գրականություն

[1]- Государство и человек в современных международных конфликтах, Екатерина Степанова, Международные процессы, № 1(19). Январь–апрель 2009

[2]-University of Heidelberg-http://www.uni-heidelberg.de/research

[3] - Практическая конфликтология для журналистов. Центр Экстремальной журналистики, 2006

[4]- Television Coverage of the Vietnam War and the Vietnam Veteran. Erin McLaughlin, http://www.warbirdforum.com/media.htm

[5]- Война и СМИ: сербская трагедия, Анна Кляйн. http://www.srpska.ru/article